ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ

13.05.2010Թ. ժ.16°° Կապուտանի մշակույթի տան դահլիճ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մայիսի 13-ին Կոտայքի մարզի Կապուտան համայնքում տեղի ունեցավ համայնքի 2010թվականի առաջին եռամսյակի հաշվետու ժողովը:
Ժողովին ներկա էին գտնվում Կոտայքի մարզպետ՝ պարոն Կ.Շահգալդյանը և մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:
Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Կոտայքի մարզի Կապուտան համայնքի ղեկավար պարոն ~~Ս.Միքայելյանը~~ և ներկաներին հայտնեց, որ ժողովի նպատակը առաջին եռամսյակում կատարված աշխատանքների մասին հաշվետվության ներկայացնելն է և 2010թ. ընթացքում Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների քննարկումը:Այնուհետև ներկայացվեց համայնքի ժողովի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **Ստուգումների արդյունքների ամփոփում**

. Համայնքում իրականացվող վարչական հսկողության արդյունքների քննարկում
Զեկ. ՏԻՄ վարչության պետ՝Ա.Հակոբյան

. Համայնքի ֆինանսական գործունեության վերաբերյալ քննարկում
Զեկ. ՏԻՄ վարչության պետ՝ Լ.Նահապետյան

. Հողային օրենսդրության պահանջների կատարման ուղղությամբ համայնքի ղեկավարի գործունեության քննարկում
Զեկ.Գլխավոր հողաշինարար Լ.Պետրոսյան

.Քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի գործունեության քննարկում
Զեկ. Քաղաքաշինության վարչության պետի տեղակալ Ռ.Ներսիսյան

2.Համայնքի ղեկավարի առաջին եռամսյակի հաշվետվություն
Զեկ.-Կապուտան համայնքի ղեկավար Ս.Միքայելյան

- Ֆինանսական գործունեության մասին տեղեկատվություն
- Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված հարցերի տեղեկատվություն.
- Համայնքում իրականացվող կրթական և առողջապահական ծրագրերի իրականացում
- Համայնքում իրականացվող քաղաքաշինական ծրագրերի իրականացման մասին տեղեկատվություն

3. **Հարցեր բնակիչների կողմից**

.Ելույթ ունեցավ Կոտայքի մարզի ՏԻՄ վարչության պետ պրն. Ս.Հակոբյանը

Պարոն Հակոբյանը ներկայացրեց 2009թվականի և 2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Կոտայքի մարզի Կապուտան համայնքում վարչական և ֆինանսական վերահսկողության ընթացքում կազմված ակտում առկա թերությունների ու բացթողումների մասին: Նշեց որ կան թերություններ համայնքի ավագանու գործունեության կազմակերպման մեջ, խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջը, 14-րդ հոդվածի 4-րդ պարբերականի պահանջները և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի պահանջները:
Բացթողումներ կան համայնքային ծառայոների անձնական գործերում:
Առկա են թերություններ նաև համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների մեջ, խախտվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության և 9-րդ մասի 2-րդ պարբերության պահանջները, նշեց որ սահմանված էր համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրեր, սակայն չկար գրանցումների համապատասխան մատյան:
Պարոն Հակոբյանի ելույթի ընթացքում պարոն Շահգալդյանը հորդորեց ավագանիներին լինել ավելի ակտիվ և նշեց որ համայնքի ավագանիները պետք է լինեն համայնքի ղեկավարին հակակշիռ:

.Համայնքի ֆինանսական գործունեության վերաբերյալ ակտում նշված թերությունների քննարկման համար խոսքը տրվեց Ֆին.վարչության պետ Լ.Նահապետյանին

Պարոն Նահապետյանը նշեց, որ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի նկատմաբ հաշվառումը թերի է ինչը առկա է նաև գյուղապետարանի դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների մասով:
Դրամարկղային գործունեության իրականացման կարգի նկատմամբ տարված հսկողության արդյունքում պարզվեց, որ 2009թ.-ի դեկտեմբեր ամսին հողի հարկի գումարները՝ 495.5 հազ դրամի չափով մուտքագրվել է դրամարկղ, որը ՀՀ կառավարության 2009թ.-ի N 750/Ն որոշման պահանջների խախտում է:

Հողային օրենսդրության պահանջների կատարման ուղղությամբ կատարած գործունեության մասին ելույթ ունեցավ գլխավոր հողաշինարար Լ.Պետրոսյանը

Նշեց, որ ընդհանուր առմամբ համայնքում անցկացվող հողամասերի աճուրդ-վաճառքի և վարձակալական մրցույթի ընթացակարգը համապատասխանում է գործող օրենսդրությանը:

.Քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի գործունեությունը ներկայացնելու համար ելույթ ունեցավ քաղաքաշինության վարչության պետի տեղակալ Ռ.Ներսիսյանը

Նշվեց, որ համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետանախագծային առաջադրանքները համապատասխանում են գործող կարգին:
Համայնքի ղեյկավարի կողմից ծրագրավորվող փոփոխությունների մասին իրազեկումը և նախագծերի քննարկումը չի իրականացվել, խախտելով ՀՀ կառավարության 28.10.1998թ. N660 որոշման պահանջները:
Պարոն Շահգալդյանը առաջարկեց հետագայում հրապարակել կատարվող շինությունների նախագծերը:
Մարզպետ Կ.Շահգալդյանը խոսեց ակտի և քննարկումների մասին և հույս հայտնեց որ այսուհետ կուղղվեն մինչ օրս կատարված թերությունները և կլրացվեն բոլոր բացթողումները:

2.Հաշվետվությամբ ելույթ ունեցավ համայնքի ղեկավար՝ Ս.Միքայելյանը

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2010Թ. տվյալներով Կապուտան համայնքն ունի 294 տնտեսություն,իսկ համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 1445 մարդ:Ընտրողների թվաքանակը 2008թ. տվյալներով կազմում է 950 մարդ,դպրոցի երեխաների թիվը կազմում է 191 աշակերտ,ուսուցիչների թիվը կազմում է 21 մարդ

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Ընդ. գյուղ. նշանակության հողեր - 3194.78հա
  այդ թվում վարելահողեր - 991.9 հա

- Բնակավայրեր - 64.75հա
- Արդյունաբերության ընդերքօգտագործ. և
  այլ արտադր. նշ. օբյեկտների - 9.26 հա
- Էներգ.,տրանսպորտի կապի կոմունալ
  ենթակ. օբյեկտներ - 5.79 հա

- Հատուկ պահպանվող տարածքներ - 20.07 հա
- Հատուկ նշանակության տարածքներ - 4.5 հա
- Անտառային - 65.62 հա
- Ջրային - 1.71 հա

Ընդամենը - 3366.48 հա

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2010Թ. առաջին եռամսյակի եկամուտների ցուցանիշները

	2010թվական		
	պլան	կատարողական	%
Հողի հարկ	977.9	1185.7	121.2
Գույքահարկ	200.0	248.3	124.1
Տեղական տուրք	0	0	0
Հողերի վարձավճար	100	262.0	262.0
Հողերի օտարումից մուտքեր	215.3	0	0
Այլ գույքի վարձակալություն	450.0	450.0	100

Ընդհատելով համայնքի ղեկավարին պարոն Շահգալդյանը բնակիչների ուշադրությանը ներկայացրեց հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին ՀՀ օրենքի համառոտ բովանդակությունը:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այս ծրագրի շրջանակներում համայնքի ղեկավարը կարևորեց հատկապես հետևյալ աշխատանքները.

1. Աղբահանության խնդիրների վերացում,
2. Գիշերային լուսավորության գործընթացի ավարտում
3. Ճանապարհների նորոգում,
4. Մսուր-մանկապարտեզի շենքի կառուցում:
5. Տնամերձ- հողամասերի աճուրդ-վաճառքի կազմակերպում
6. Բոլոր թաղամասերում խմելու ջրի շուրջօրյա մատակարարում

Նշեց,որ համայնքի բյուջեի ընձեռած հնարավորությունների շրջանակներում պետք է իրականացվեն նշված գործառույթները:

ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Առողջապահական և կրթական ծրագրերի իրականացման համար բնակչությանը տրվել է ֆինանսական օգնություն՝ 390.0 հազ. դրամի չափով:

.Քաղաքաշինական ծրագրերի իրականացման տեղեկատվություն

1. 2009թ.-ին տրվել է մեկ շինարարության թույլտվություն և մեկ ավարտական ակտ
2.2010թ.-ին տրվել է երկու շինարարության թույլտվություն:

3. Հարցեր բնակիչների կողմից

■ Համայնքի բնակիչ Պ.Մինասյանը հարց բարձրացրեց տնամերձ հողամաս հատկացնելու վերաբերյալ:
■ էլ. հոսանքի սնուցման հենասյունների վիճակի մասին հարց բարձրացրեց Հ.Հովհաննիսյանը:

---Պարոն Շահգալդյանը խոստացավ,որ կնպաստի բնակիչների կողմից բարձրացրած հարցերի լուծմանը :

Բնակիչների կողմից եղան տարբեր հարցադրումներ առկա խնդիրների վերաբերյալ և համայնքի ղեկավարի ու մարզպետի կողմից նշված հարցերին տրվեցին պատասխաններ:

Ամփոփելով կայացած ժողովը մարզպետ պարոն Շահգալդյանը նշեց , որ մշտապես գտնվում է բնակչության կողքին և վերահսկելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի կատարած բոլոր աշխատանքները:

Ժողովի նախագահ՝ Ս.Միքայելյան

Քարտուղար՝ Հ.Դավթյան